

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am



Մայիսի 12-ին թուրք-ազերիները Ներխուժել են Սյունիք և դեռ այստեղ են...

Մայիսի 12-ին և 13-ին, «սահմանների ճշգրտման» պատրվակով, ադրբեջանական ՇՈՒ կողմից ՀՀ Սյունիքի և Գեղարքունիքի մարզերի սահմանային որոշ հատվածների հանդեպ իրականացված ոտնձգություններից հետո ստեղծված իրադրությունը, դեռևս չի հանգուցալուծվել:

Չնայած հանգամանքին, որ հայկական ստորաբաժանումների ձեռնարկած գործողությունների արդյունքում ադր-

բեջանական զինվորականները ստիպված են եղել հեռանալ որոշ հատվածներից, նրանց մի մասն այս պահին շարունակում է գտնվել Հայաստանի Հանրապետության տարածքում:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերը կարևորում են իրադրության խաղաղ կարգավորման անհրաժեշտությունը, այդուհանդերձ, ևս մեկ անգամ հայտարարում, որ ոտնձգությունները Հայաստանի ինքնիշխան տարածքների հանդեպ բացարձակ անընդունելի են, և ադրբեջանական կողմը պարտա-

վոր է առանց նախապայմանների վերադառնալ իր ելման դիրքեր:

Հարկ ենք համարում նշել, որ բոլոր երեք ուղղություններում, որտեղ ադրբեջանական զինուժը փորձել է դիրքային առաջխաղացում ապահովել, թե՛ ամբողջ տարածքը, թե՛ իրենք՝ զինվորականները, և թե՛ նրանց ապահովման ուղիները գտնվում են հայկական զինված ուժերի լիարժեք վերահսկողության տակ:

ՀՀ ՊՆ

Սև լիճը վիճելի տարածք չէ

Մայիսի 12-ից ադրբեջանական բանակի մի խումբ զինվորականներ, խախտելով Հայաստանի Հանրապետության պետական սահմանը, որոշ դիրքեր են զբաղեցրել Սյունիքի մարզի հյուսիսային սահմանագծում Սև լճի շրջակայքում: Խորհրդային շրջանի ինչպես ռազմական, այնպես էլ վարչական բարտեզներում Հայաստանի և Ադրբեջանի սահմանն անցնում է Սև լճով, որի մեծագույն մասը Հայաստանի տարածքում է: Ադրբեջանական կողմն իր ոտնձգությունները փորձում է հիմնավորել իր տրամադրության տակ եղած քարտեզով, որտեղ լիճը և դեպի արևելք ձգվող բարձունքներն «իրենց տարածքում» են: Մի քանի օր առաջ Հայաստանի Հանրապետության ՇՈՒ գլխավոր շտաբը խնդրի վերաբերյալ մանրամասն պարզաբանումներ տվեց՝ ցուցադրելով Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Ադրբեջանի սահմանային բաժանումը հավաստող քարտեզ-

ներ: 1929թ., 1969թ. և 1970թ. հրատարակված քարտեզները վավերացրել են Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Ադրբեջանի Գերագույն խորհուրդների նախագահությունների քարտուղարները: Քարտեզները կնքված են, ստորագրված, ունեն անհրաժեշտ բոլոր նշումները, ինչը բացակայում է ադրբեջանական կողմի ներկայացրած տարբերակում:

Սև լիճը և հարակից տարածքները ԽՍՀՄ Գլխավոր շտաբի 1942 թ. քարտեզ (Յ-38-21, Գորիս)։ Իհիմնական մասը, ինչպես նաև լճից հարավ և հարավ-արևելք ընկած բլուրները, որոնք զավթել է Ադրբեջանը՝ Խորհրդային Հայաստանի սահմաններում են:

Չնայած բանակցություններին և միջազգային կառույցների ու տարբեր երկրների արձագանքներին՝ ադրբեջանական զինվորները դեռևս Հայաստանի տարածքում են: «Օրբելի» վերլուծական կենտրոնի տարածաշրջանային

հարցերով փորձագետ Տարոն Հովհաննիսյանը մի քանի օր Սյունիքի մարզում էր, և ներկայացրել է իրադրությունը Սև լճի շրջանում:

– Ադրբեջանական զինվորները լճի արևելյան և հարավ-արևելյան կողմով են առաջացել, իսկ արևմտյան ուղղությամբ առաջխաղացում չունեն: Աշխարհագրական դիրքն ու ռելիեֆը դժվարություններ են ստեղծում. դեպի արևմուտք Մեծ և Փոքր Իշխանասար լեռնազանգվածն է, և լճի արևմտյան մասում հայկական բանակի ստորաբաժանումներն են: Այսինքն՝ լճի արևմտյան և հարավ-արևմտյան հատվածը հայկական կողմի վերահսկողության տակ է: Ադրբեջանական զինվորականներն, ամենայն հավանականությամբ, օգտվել են տեղանքից և եղանակային պայմաններից ու արևելքից առաջանալուց հետո շարժվել դեպի արևմուտք՝ Հայաստանի Հանրապետության տարածքում մի քանի բարձունք զբաղեցնելով. մասնավորապես՝ Ձագեծորի գլուխը, որը Մեծ և Փոքր Իշխանասարներից հետո այդ տարածքում բարձրությամբ երրորդն է:

Բաց աղբյուրներում հրապարակված տեսանկյունների, ինչպես նաև մեր փոր-
Շարունակությունը՝ էջ 3

**Էդ ո՞ւմ վրա եք թուր
հանել,
հայոց մեծ ազգին
չե՞ք ճանաչում:**

ԽԱՀԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆ

**Ներքին Հանդի
մատույցներում
անդորրը
պահպանվում է,
թեև...**

Սեւ լճի շուրջ տեղի ունեցող իրադարձությունները, կարելի է ասել, հավելյալ լարվածություն են առաջ բերել Սյունիքի արեւելյան, ինչպես եւ հյուսիսային ու հյուսիսարեւելյան ամբողջ սահմանագծում:

Դրա ամենացայտուն դրսեւորումներից մեկը, անշուշտ, Խոզնավարի ուղղությամբ ադրբեջանցի զինյալների առաջխաղացումն էր մայիսի 20-ին, որը, բարեախտաբար, շարունակություն չունեցավ, իսկ ավելի ճիշտ՝ կասեցվեց:

Սահմանագծում լարվածության հաջորդ օջախը Ներքին Հանդ գյուղի արեւելյան մատույցներն էին:

Դեռեւս 2020 թ. դեկտեմբերի կեսերին, երբ հրետակոծվել են Հայկասարի (Շուբուրաթագի) բարձունքները, մեր մարտական դիրքերը հետ են քաշվել:

Օգտվելով ստեղծված իրավիճակից, ադրբեջանցի զինյալներն իրենց մարտական դիրքերն են կազմակերպել Հայկասարում խախտելով Նոյնիսկ խորհրդային շրջանում գոյություն ունեցած հայ-ադրբեջանական սահմանը:

Մինչեւ հիմա սահմանախախտ ադրբեջանցիները հետ չեն քաշվել: Ավելին, վերջին օրերին այդ ուղղությամբ նկատվել էին ադրբեջանական զինուժի կուտակումներ:



Դա էլ պատճառ էր դարձել, որ հայկական կողմը, Ռուսաստանի Դաշնության սահմանապահների մասնակցությամբ, մայիսի 18-ին ադրբեջանցի զինյալներին ներկայացնի զբաղեցրած դիրքերից հետ քաշվելու պահանջ:

Ադրբեջանցիները, սակայն, ոչ միայն մերժել են ներկայացված պահանջը, այլ իրավիճակն ավելի արելու ձգտումներ ցուցադրել:

Մայիսի 19-ի երեկոյան հայ-ադրբեջանական սահմանի այդ հատվածում, ըստ շրջանառվող ոչ պաշտոնական տեղեկությունների, ակնկալվում էր ադրբեջանցիների առաջխաղացում:

Հայկական զինված ուժերի եւ կամավորականների կողմից հուսալիորեն վերահսկվող սահմանի այդ հատվածը Նոյն գիշեր համալրվել է Կապանի ինքնապաշտպանական ուժերով՝ գլխավորությամբ համայնքապետ Գետրոգ Փարսյանի:

Ադրբեջանցի զինյալների կողմից, ի վերջո, որել է սադրանք տեղի չի ունեցել:

Ինչպես տեղեկացրեց Ներքին Հանդ գյուղի վարչական ղեկավար Խաչատուր Բաղդասարյանը՝ «Գյուղի մատույցներում իրավիճակը խաղաղ է, սակայն ադրբեջանական զինուժի կուտակումները պահպանվում են»:

Խաչատուր Բաղդասարյանի հավաստիացմամբ՝ հայկական կողմն էականորեն ուժեղացրել է սահմանի պաշտպանությունը եւ որել է սադրանքի դեպքում հակառակորդն արժանի պատասխան կստանա:

||



© Andranik Keshishyan

103 տարի առաջ Սարդարապատի հերոսամարտում ծնվում էր Հայաստանի առաջին հանրապետությունը

■ Երեք փաստաթուղթ այդ օրերից

Հովհաննես Թումանյան

Մեր սերունդը էն սերունդն է, որ դեռ երեկ ազատ Հայաստան էր երազում:

Ազատ Հայաստան էին երազում ռուսահայը, տաճկահայը, պարսկահայը եւ բոլոր հեռավոր գաղութները:

Ազատ Հայաստան էին երազում հայ ժողովրդի բոլոր խավերը, առանց սեռի ու հասակի խտրության:

Ի՞նչ ասես, որ չէր տա գրեթե ամեն մի հայ, միայն թե աչքով տեսներ ազատ Հայաստանը: Ու հանկարծ...

Արդեն իրականություն է երեկվա մեծ երազը. ազատ է Հայաստանը, ամբողջ աշխարհի կողմից ճանաչված ինքնուրույն հանրապետություն է նա, իր եռագույն դրոշակով կանգնած է մյուս պետությունների շարքում:

Գեներալ Մովսես Սիլիկյանի կոչը հայ ժողովրդին

Հայեր, շտապեցե՛ք հայրենիքն ազատելու: Հասե՛լ է լուսին, երբ յուրաքանչյուր հայ՝ մոռնալով իր անձնականը, հանուն Մեծ գործի՝ հայրենիքի փրկության եւ իր կնոջ ու աղջիկների պատվի պաշտպանության, պետք է գործ դնի իր վերջին ճիգը՝ թշնամուն հարվածելու համար:

Մենք չէինք ուզում կռվել. հանուն խաղաղության ու հաշտության պատրաստ էինք ընդառնալու ամեն տեսակ գոհողությունների, սակայն մեր նամարդ թշնամին ընթանում է իր ծրագրած ուղիով. նա, ըստ երեւոյթին, ստրկացնել է ուզում մեզ, բայց, իրոք, ուզում է ոչնչացնել մեր բազմաշարք ազգը: Բայց բանի որ պիտի ոչնչանանք, ավելի լավ չէ՞, որ զենքը ձեռներիս փորձենք պաշտպանել մեզ: Գուցե հաջողվի մեզ կռվով ձեռք բերել ապրելու իրավունքը:

Իսկ որ մենք կարող ենք պաշտպանվել, այդ ցույց տվին վերջին կռիվները մեր ճակատում, ուր մեզանից թվով գերազանց թշնամին նահանջի է դիմել մեր հերոսական զորի առաջ:

Հարկավոր է մի ճիգ եւս, եւ թշնամին վռնդված կլինի մեր երկրի սահմաններից, ուր մեր պապերն ու հայրերը երկար տարիներ արյուն-քրտինքով աշխատել են գեթ մի կերպ հայթայթել իրենց օրվա ապրուստը:

Հայեր, ժամանակը չէ դանդաղելու: Մինչեւ հիսուն տարեկան ունեցող բոլոր տղամարդիկ պարտավոր են զենքի տակ գալու. ես պահանջում եմ ամենքից ներկայանալ իրենց զենքերով ու փամփուշտներով հայրենիքի պաշտպանության համար:

Հայրենիք, հիշեցե՛ք հինգերորդ դարու փափկասուն տիկնանց, որոնք ոգետրեցին իրենց ամուսիններին դեպի Մեծ գործը, անմահ Վարդանի կռիվների ժամանակ. հետեւեցե՛ք նրանց օրինակին. եթե չեք ուզում, որ ձեր պատիվը ոտնակոխ լինի, խրախուսեցե՛ք այն վախկոտներին, որոնք զանազան պատրվակներով խուսափում են ճակատ գալուց: Հավաքեցե՛ք ռազմամթերք, հաց, հագուստ եւ

ուրիշ մթերքներ...

Ես խորապես համոզված եմ, որ իմ այս կոչը անարձագանք չի մնա, եւ երկու-երեք օրվա ընթացքում կկազմակերպվի մի այնպիսի բազմաթիվ զորաբանակ, որին կհաջողվի վռնդել թշնամուն հայրենի հողի սահմաններից եւ ապահովել հայ ժողովրդի գոյությունը:

Հանրուն բազմաշարք ժողովրդի ֆիզիկական գոյության,

Հանրուն ոտնակոխ եղած ճշմարտության՝

Ոտքի կանգնեցե՛ք: Դեպի սրբազան պատերազմ:

Բոլոր զենքի ընդունակ տղամարդիկ պարտավոր են ներկայանալ Երեսնում զոր. Բեժանբեգին, իսկ բոլոր հավաքված մթերք-

«Հաարատ Կապան» ՓԲԸ գլխավոր տնօրեն Դավիթ Թովմասյանը և Կապան համայնքի ղեկավար Գեորգ Փարսյանը սոցիալ-տնտեսական համագործակցության մասին հուշագիր են ստորագրել

Ինչպես յուրաքանչյուր տարի, այս տարի ևս «Հաարատ Կապան» ՓԲԸ գլխավոր տնօրեն Դավիթ Թովմասյանը և Կապան համայնքի ղեկավար Գեորգ Փարսյանը սոցիալ-տնտեսական համագործակցության մասին հուշագիր են ստորագրել:

Հուշագրի համաձայն՝ ընկերությունը սոցիալ-տնտեսական համագործակցության շրջանակներում 2021 թվականի ընթացքում, ընդհանուր՝ 117,700,000 ՀՀ դրամով, ֆինանսավորելու է Կապան համայնքում իրականացվող հետևյալ ծրագրերը՝

Կապան համայնքի սահմանամերձ բնակավայրերում բնակելի տների ձեռքբերում,

Գեղանուշ բնակավայր տանող ճանապարհի վերանորոգում, ինչպես նաև մի շարք այլ ծրագրերի իրականացման համար ֆինանսավորում:

Ծրագրերն ընտրվել են՝ հաշվի առնելով դրանց կատարման առաջնահերթությունն ու ընդգրկելով ոչ միայն Կապան քաղաքը, այլ



ևսև գյուղական բնակավայրերը:

Կապան համայնքի համար իրականացվող յուրաքանչյուր նախաձեռնությունն ընկերությունը շարունակում է պատվով իրականացնել և, հուշագրով սահմանված

ները պետք է հանձնել տեղական Ազգ. խորհուրդներին:

24 ՄԱՅԻՍԻ 1918 Թ.

Կաթողիկոս Գեորգ Ե Տիգրանեցու խոսքը Սարդարապատի հերոսամարտի օրերին

Ա՛զգ հայոց, թուրքը՝ մեր բանական հորի դարավոր թշնամին, նվաճել է Ալեքսանդրապոլը, շարժվում է դեպի սիրտը մեր երկրի, մեր հավատի, մեր կենսագրության: Գալիս է Արարատյան երկրի վրա: Թուրքը կոտորած ու ավեր փռելով գալիս է, եւ մեր զորապետներն էլ ուրիշ ելք չեն գտնում այդ աղետից, բան հայոց հայրապետին փախուստի մղելը: Նրանք Ամենայն հայոց կաթողիկոսին առաջարկում են ոսոխի բերանին թողնել Մայր աթոռ Էջմիածինը, մեր սրբարանները, հայ ժողովուրդը, հայրենի երկրի վերջին կտորը: Առաջարկում են լքել այս բոլորը եւ սեփական կյանքը փրկել Բյուրականում կամ ուրիշ անմատչելի որեւէ լեռնածեղափ վրա: Ո՛չ եւ ո՛չ, հազմը անգամ ոչ: Ես չեմ լքի մեր սուրբ Նախնիներից ավանդված Մայր աթոռը: Ես չեմ հեռանա հայոց առաքելական եկեղեցու օջախից: Եթե հայոց զինվորությունն ու ինքը՝ հայ ժողովուրդը, չեն կարողանա թշնամու առաջխաղացումը կասեցնել, եթե ի գործ չեն լինի փրկելու մեր սրբությունները, ապա թող ես նահատակվեմ հենց այստեղ, շեմի վրա՝ Մայր աթոռի, որի զահակալի պատիվն ունեմ մեր սուրբ Նախնիների արդար բարեխոսությամբ եւ Աստծո ողորմածությամբ:

Թուրքը չի կշտացել մեր ժողովրդի արեւմտյան կեսով, հիմա էլ այս մի կեսի վրա է եկել անհագուրդ ու մոլեգնած:

Եվ եթե այստեղ էլ հաղթեց, դա կլինի ստույգ վերջը մեր ազգային գոյության: Մի՞թե մենք չպիտի կարողանանք պահպանել մեր օջախի կրակը, մեր հավատի ջահը, մեր ազգային գոյի հիմքերը: Իսկ եթե եկել է վերջը, ապա այն ինչո՞ւ չընդունենք պատվով ու քաջությամբ եւ ոչ թե ողորմելի զեռուկի պես ոսոխի առաջ սողալով: Մեր պատմության անցյալ դարերը լիքն են քաջության օրինակներով, ներկված են նահատակների արյամբ: Դրանով չի սպառվել մեր արյունը, եւ չի կորսվել քաջությունը մեր շարքերից: Դարեր շարունակ հայոց ազգն այսպես է ապրել՝ իր ինքնության համար պայքարելով, իր վաղվա համար այսօր մեռնելով: Եվ որովհետեւ ով գաղափարի հետ է մեռնում, մեռնում է որպես հատիկը ցորանի, ապա հատիկի մահով նոր կյանքեր են ծնվում վաղ թե ուշ: Դրա համար է, որ զանգվածային մահերով ու կոտորածներով հարուստ մեր կենսագրությունը չի ունեցել եւ երբեք էլ չպետք է ունենա վերջին վերջակետ: Ուրեմն էլ ինչո՞ւ դավենք ապրելու եւ գոյատևելու մեր ազգային կերպին: Ինչո՞ւ ազգովին չբարձրանանք թշնամու դեմ, որ գալիս է անդարաբայան իր թեթեւ հաջողություններով հղիացած եւ մեր արյան վերջին կաթիլին ծարավի...

»

ՀԱՍՏԱՏ ԿԱՊԱՆ
20.05.2021



Ըստ աղբյուրներում հրապարակված տեսանյութերի, ինչպես նաև մեր փորձագետների՝ Սև լիճ այցելության արդյունքներով ՀՀ տարածք ներխուժած ադրբեջանական դիվերսանտների հիմնական տեղակայման վայրերի տեղորոշումը:

Սև լիճը վիճելի տարածք չէ

Սկիզբը՝ էջ 1

ձագետների՝ Սև լիճ այցելության արդյունքներով ՀՀ տարածք ներխուժած ադրբեջանական դիվերսանտների հիմնական տեղակայման վայրերի տեղորոշումը:

Նկարում պատկերված են ՀՀ Սյունիքի մարզի Ձագեձորի գյուխ (3232մ, 39°34'44.73»N 46°14'2.81»E) և հարակից 2924 մ նշումով (39°34'26.89»N 46°15'26.48»E) բարձունքները, որոնք զավթվել են Ադրբեջանի ՉՈւ կողմից: Բարձունքները տեղակայված են Սև լճից հարավ-արևմուտք, հարավ:

Ադրբեջանական զինվորականներն արևելյան ուղղությամբ մոտ 3.5 կմ առաջանալով՝ տարածվել են դեպի խոզակար ու Վերիշեն գյուղերի ճանապարհը: Այդտեղից էլ մի քանի խումբ շարժվել է հարավ-արևմուտք՝ Ձագեձորի գյուխ, որի հարակից բարձունքները հայկական զինուժի հսկողության տակ են:

Տեղորոշվել է Սև Լճից հարավ-արևելք ընկած հատվածում՝ Նույնպես ՀՀ տարածքում, Ադրբեջանի ՉՈւ զավթած ևս մեկ բլուր (39°35'50.81»N 46°17'17.29»E), որը տեղադրվել է ընդհանուր քարտեզի վրա:

«Ադրբեջանցիները ներկայացրել են ինչ-որ քարտեզ, որտեղ Սև լիճը իբր «Ադրբեջանի տարածքում» է: Սակայն բաց աղբյուրներում հրապարակված նախկին ԽՍՀՄ Գլխավոր շտաբի և այլ քարտեզների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս հատվածը Խորհրդային Ադրբեջանի կազմում երբեք չի եղել», – ասաց փորձագետը: «Մենք նաև գիտենք, որ 1920-40-ական թվականներին սահմանները զգալիորեն փոխվել են՝ ի վնաս Խորհրդային Հայաստանի: Օրինակ՝ Ալ լճերի հատվածում՝ Վարդենիսում, Գորիսում, Կապանում, և այլն ու զգալի տարածքներ տրվել են Խորհրդային Ադրբեջանին: Սկզբնական շրջանում դա արվում էր քրդական գավառի անասնապահությունը զարգացնելու պատճառաբանությամբ, սակայն հետագայում Կարմիր Քրդստանը լուծարելուց հետո, այդ շրջաններն անցան Խորհրդային Ադրբեջանին և այնտեղ ադրբեջանցիներ հաստատվեցին», – հավելեց Տարոն Հովհաննիսյանը:

Վերը նշված բլուրի տեղորոշումը տեսանյութի հիման վրա կատարվել է երկու կողմից դիտարկելու միջոցով: Պատկերված է բլուրի արևելյան ստորոտով անցնող ճանապարհը: Հետևաբար նկարահանումն իրականացվել է տվյալ վայրից՝ 39°35'49.31»N 46°17'27.77»E:

– **Հայաստանի Հանրապետությունը պաշտոնապես դիմել է ՀԱՊԿ-ին: ԻՆչ զարգացումներ կարող են լինել:**

– Երկրորդ հոդվածի հիմքով դիմում են, եթե անդամ-պետությունն ունի անվտանգության սպառնալիք, չորրորդի դեպքում՝ երբ կա անմիջական ռազմական հարձակում, –

ասաց Հովհաննիսյանը:

– Սակայն պետք է նաև նշել, որ մի շարք պատճառներով ՀԱՊԿ-ն բավարար աղյուսակետություն չունի: Նախ՝ կառույցի անդամ երկրներից մի քանիսը տնտեսական և ռազմական ավելի սերտ հարաբերություններ ունեն Ադրբեջանի, քան՝ Հայաստանի հետ: Օրինակ՝ Բելառուսը, Ղազախստանը... Այս օրերին Ադրբեջանի ղեկավարությունը խոսել է Ղազախստանի Նախագահի հետ, իսկ մայիսի 18-ին Ադրբեջան է ժամանել Բելառուսի պաշտպանության նախարարը, այն դեպքում, երբ իրենց կառույցի անդամ-պետության հանդեպ Ադրբեջանն ագրեսիվ քայլերի է դիմել:

Տարոն Հովհաննիսյանի կարծիքով՝ ՀԱՊԿ-ն պետք է առավել հստակ արտահայտի իր դիրքորոշումը, հակառակ դեպքում՝ կարող է հաստատվել առկա տպավորությունը, թե այն արդյունավետ չէ: Հայաստանը, բացի ՀԱՊԿ-ից, դիմել է նաև Ռուսաստանի Դաշնությանը:

Առկա է քարտեզը՝ հանված 1928 թ. ԽՍՀՄ Կենտրոնականի հաստատումը՝ հրատարակված ԽՍՀՄ ատլասից: Դրանում հստակ երևում է, որ թե Ալ լճերի հատվածը, թե Սև լճի տարածքը, թե հարավում և հյուսիս-արևելքում այլ տարածքներ ներառված են եղել ՀԽՍՀ տարածքում: Атлас Союза Советских Социалистических Республик / [сост. и награв. в картоизд-ве НКВД РСФСР; авт. предисл. А. Енукидзе]. - [М-бы разные]. - Москва : Изд. ЦИК СССР, 1928 (напеч. Упр. гос. знаков «ГОЗНАК»:), , стр. 93

– **Վերջին օրերին սահմանային խախտումների շուրջ տեղի ունեցող զարգացումների արձագանքել են նաև մի շարք արևմտյան երկրներ: ԻՆչ կարելի է սպասել նրանց արձագանքներից:**

– Արցախի դեմ 2020թ. աշնան Ադրբեջանի սանձազերծած պատերազմից հետո Միացյալ Նահանգներն ու Ֆրանսիան դուրս են մնացել ԵԱՀԿ Մինսկի խմբի բանակցային գործընթացից: Նրանց Ադրբեջանն է մերժում, իսկ Հայաստանը պնդում է, որ ԵԱՀԿ ՄԽ ձևաչափը պետք է վերականգնել, ինչին կողմ է նաև Ռուսաստանի Դաշնությունը: Ֆրանսիան քննադատում է Ադրբեջանին՝ դրույթունն ապակայունացնելու համար: ԱՄՆ-ն Նույնպես քննադատում է, սակայն նրա կոչերն ուղղված են երկու կողմերին, թեև Ադրբեջանն է խախտել Հայաստանի Հանրապետության պետական սահմանը:


Մեր գրուցակիցը նաև նշեց, որ այս հատվածներում վիճելի տարածքներ չկան, քանի որ դրանք երբեք ներառված չեն եղել Ադրբեջանի կազմում, ուստի սխալ է «վիճելի տարածք» ձևակերպումը: «Վիճելի տարածք» հասկացությունը կիրառելի է Ալ լճերի դեպքում, որի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունը կարող է իր իրավունքները

Ձանգեզուրի ՊՄԿ-ն կգլխավորի ազգությանը հնդիկ, Գերմանիայի քաղաքացի Պարագ Յոհաննես Բհատը

«Ձանգեզուրի պղնձամուխթենային կոմբինատ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենը, ըստ Քաջարանից ստացվող տեղեկությունների, պաշտոնակ է արվել: Միեւնույն ժամանակ՝ քննարկվում է նրա՝ այդ ընկերությունում ինչ-ինչ ճանապարհով ձեռք բերած բաժնեմասն առուվաճառքի ձեռով այլ սուբյեկտի հանձնելու հարցը:

Գլխավոր տնօրենի պաշտոնակության պատճառների մասին ամենատարբեր խոսակցություններ են շրջանառվում:

Ըստ Նույն աղբյուրի՝ **«Ձանգեզուրի ՊՄԿ»** ՓԲ ընկերությունը կգլխավորի ոմ Պարագ Յոհաննես Բհատը՝ ազգությամբ հնդիկ, Գերմանիայի Դաշնային Հանրապետության քաղաքացի:



Ամենայն հավանականությամբ Նոր գլխավոր տնօրենը Քաջարանի հանքագործների կնեկայացվի մայիսի 25-ին:

Սյունիքում եւ հատկապես Քաջարանում, սակայն, համոզմունք են հայտնում, թե կարային այդ փոփոխությունը բացառապես երեւութական կամ կոսմետիկ բնույթ է կրում: Եվ այդ ամենը պայմանավորված է՝ նախ՝ ընկերության բաժնեմասերի շուրջ տեղի ունեցող դատական «ռազերկաները» հանրությունից թաքցնելու մտադրությամբ, ինչպես եւ նախընտրական լարվածությունը Սյունիքում հնարավորիս մեղմելու նկատառումով: Ընդ որում՝ Քաջարանի պատճառով Սյունիքում ստեղծված նախընտրական լարված վիճակն անբարենպաստ է ոչ միայն Ռոբերտ Քոչարյանի եւ Սերժ Սարգսյանի գլխավորած դաշինքների, այլեւ վարչապետի պաշտոնը ժամանակավորապես զբաղեցնող Նիկոլ Փաշինյանի համար, ով, դատելով վերջին երեք

սեփականության վերաբաշխում, քանի դեռ Քաջարանի կոմբինատի հետ շփվողների շրջանակը չի փոփոխվել, քանի դեռ 2014-ին Քաջարանում ներդրված հայտնի պառավ յաբուն իր կեղտոտ մատների վրա խաղացնում է ամբողջ Քաջարանն ու մերձակա բնակավայրերը, քանի դեռ գործող իշխանությունը ճշմարիտ տեղեկություններ չի հաղորդում կոմբինատին առնչվող ստուգումների ու հարուցված քրեական գործերի ընթացքի վերաբերյալ, չի կարելի ընկերության գլխավոր տնօրենի փոփոխությունը համարել շատ թե քիչ լուրջ իրադարձություն, չի կարելի Քաջարանի հանքարդյունաբերական ամբողջ համալիրը չհամարել պետություն՝ պետության ներսում, չի կարելի այդ տարածքը չհամարել օկուպացված եւ հակահայկական իրողություն:

21.05.2021

.....

ներկայացնել: Այդ լճերը 1920-30-ական թվականներին օրենքի խախտումով փոխանցվել են Խորհրդային Ադրբեջանին: Վիճելի տարածք կարող են համարվել Կապանից արևելք ընկած որոշ շրջաններ, ինչպես նաև Շուշու լուխից արևելք՝ դեպի Քաջաթաղի (նախկին Խորհրդային Ադրբեջանի Կուբաթլուխ) շրջան ընկած որոշ հատվածները, որոնք Ադրբեջանին են տրվել Խորհրդային կետտրոնական իշխանությունների որոշումով՝ առանց հաշվի

առնելու Խորհրդային Հայաստանի բազմաթիվ բողոքներն ու առարկությունները», – պարզաբանեց Տարոն Հովհաննիսյանը:

Ադրբեջանական զորքերի խմբեր Հայաստանի Հանրապետության տարածք են մտել նաև Գեղարքունիքի մի քանի հատվածներում, որոնք Նույնպես երբեք Ադրբեջանի կազմում չեն եղել:

ՊԱՏՐԱՍՏԵՆ Է «ՕՐԲԵԼԻ» ԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

«Սյունյաց երկիրը»՝ ՍԵՆ ԼՃՈՒՄ ԿԱՄ ԻՉԽԱՆՆԱ ԼՃՈՒՄ, ՈՐԸ ՄԵՉ ԽԱՄԱՐ ՆԱԵՆ ՍՐԲՈՑ ԱՄՐԻ ԾՈՎԱԿ Ե ԿՈՇՎՈՒՄ

2021 թ. մայիսի 15-ին «Սյունյաց երկրի» ստեղծագործական խումբը ճանապարհ բռնեց դեպի Սեն լիճ...

Վերջին օրերին լճի շուրջ տեղի ունեցող դրամատիկ իրադարձությունները, լճի ուղղությամբ Ադրբեջանի փաստացի ագրեսիան խորը մտահոգություն են առաջացրել Գորիսում եւ տարածաշրջանի գյուղերում, մանավանդ որ անցած երեք-չորս օրվա ընթացքում բազմաթիվ առանցքային հարցեր այդպես էլ իրենց ողջամիտ պատասխանը չեն ստացել:

Ստեղծված իրավիճակի շուրջ անորոշությունն ավելի է խորանում եւ նույնիսկ սպառնալից բնույթ ստանում, երբ լսում ենք մայրաքաղաքի տարբեր հարթակներից հնչող իրարամերժ տեղեկությունները:

Ուստի եւ որոշեցինք անձամբ բարձրանալ լճի տարածք՝ նկատի ունենալով Նաեւ մեր քաջատեղյակությունն այդ վայրերին:

Ճանապարհի ընկանք Ակներ գյուղով (եւ ոչ թե Վերիշենով կամ Խոզնավարով):

Գյուղից վերել՝ Խաչին օսում կամ Սուրբ Զակար սրբավայրում, որ գտնվում է Ակնի ծորի եւ Մթնաձորի միացում, հանդիպեցինք ԶԶ փոխվարչապետ Տիգրան Ավինյանին, Սյունիքի մարզպետ Մելիքսեթ Դողոսյանին, Ազգային ժողովի պատգամավորներ Արմեն Խաչատրյանին եւ Նարեկ Ղահրամանյանին, ովքեր նույնպես բարձրանում էին Սեն լիճ:

Եվ մենք միասին Նախ հաղթահարեցինք Ձագեձորի լեռը ու շարժվեցինք առաջ: Ակներ գյուղից 20 կմ անցնելուց հետո Սեն լճի ափին էինք...

Ճանապարհին՝ ժամանակ առ ժամանակ, կանգ էինք առնում Սեն լճի մատուցներում եւ Մեծ Իշխանասարի արելեյան ստորոտում գտնվող զինվորական կայաններում. փոխվարչապետ Տիգրան Ավինյանը, մարզպետ Մելիքսեթ Դողոսյանն ու պատգամավորները հետաքրքրվում էին օպերատիվ իրավիճակով ու առկա խնդիրներով:

Չէր կարելի չնկատել հայոց զինվորականների վճռականությունը՝ տեր կանգնելու հայոց սրբազան հողին...

Մենք լճի արեւմտյան ափից (լճի աջ մասով) հասանք մինչեւ արելեյան կամ գուցե հարավ-արելեյան ափին գտնվող տնակներ (այնտեղ հանդիպեցինք Նաեւ Գորիս համայնքի Ակներ գյուղի վարչական ղեկավար Սպարտակ Մինասյանին եւ Վերիշեն գյուղի վարչական ղեկավար Արարատ Օրոյանին, ովքեր էլ փոխվարչապետին ու մարզպետին ներկայացրին լճի շրջակայքում տիրող վիճակի մասին):

Կարող էինք այդտեղից Գորիս վերադառնալ Վերիշեն իջնող ճանապարհով (զինվորականներն այդ ուղին եւս անվտանգ էին համարում), բայց գերադասեցինք հետ դառնալ նույն ճանապարհով:

Ես չգիտեմ, թե մեկ-երկու օր առաջ ինչ վիճակ էր տիրում լճի մերձակայքում, չգիտեմ Նաեւ, թե ինչ դրություն է հիմա տիրում Խոզնավարից դեպի լիճ բարձրացող ճանապարհի շուրջ, բայց լճի շրջանում (հատկապես արեւմտյան, հարավային եւ հարավ-արելեյան հատվածներում) հայոց զինվորականների տիրական ներկայությունն էր...

Մեծ Իշխանասարի գագաթը, ինչպես երեւում էր, ձյունածածկ էր: 2020 թ. հուլիսի 5-ին մեր ստեղծագործական խումբը հենց այդ երթուղով էր բարձրացել Մեծ Իշխանասարի գագաթ՝ Սուրբ Զովհաննես սրբավայր: Տեսականորեն կարելի էր հիմա էլ բարձրանալ այդ լեռնագագաթ՝ նույն երթուղով, որը նույնպես անվտանգ էր՝ զինվորականների հավաստմամբ: Իսկ թե ինչ վիճակ է տիրում Մեծ Իշխանասարի հյուսիսային եւ հյուսիս-արելեյան մատուցներում՝ տեղեկություն չստացանք...

Եվ, այդուհանդերձ, զարմացանք, թե մեր զինվորականների նման տեղաբաշխվածության պայմաններում ինչպես են թուրք-ազերիները կարողացել բարձրանալ ու դիրքավորվել Քաչալ դաղ կոչվող լեռան գագաթին, որ լճի հարավային կողմը երիզող լեռնագագաթն է (այդ լեռը մեր մատենագիտության մեջ կոչվում է Գյուլի Ձագեձոր):

Զարցը, ըստ երեւոյթին, մեկ պատասխան ունի. երբ ազերիները խուժել են մեր տարածք՝ այնտեղ հայոց դիրքապահներ չեն եղել հավանաբար:

Չարմանալի է Նաեւ, թե ինչպես են հիմա (եւ որ ճանապարհով) հերթափոխ կատարում ազերիների կողմից զբաղեցված այդ դիրքերում:

Իհարկե, չէր կարելի չմտախոգվել եւ վրեժով չջգվել՝ տեսնելով Սյունյաց աշխարհի մարզարիտ Սեն լճի մերձակայքի հեռավոր բարձունքներում կանգնած թուրք-ազերիներին:

Անկեղծորեն՝ այնքան էլ հասկանալի չէր հայոց զորական ուժի՝ չափից ավելի զսպվածությունը եւ «խոհեմությունը», թե այս օրերի ընթացքում որեւէ կրակոց չի հնչել մեր կողմից:

Բայց եւ գոտեպնդվեցինք՝ տեսնելով մեր տղաների տրամադրությունն ու հաստատակամությունը, Նաեւ ադրբեջանցիների դիրքերի խոցելիությունը:

Թե ինչու մերոնք ուժով չեն բշտում Սյունիք



ներխուժած ուսիսին՝ չենք կարող ասել, սակայն (չինելով ռազմական ոլորտի փորձագետ) համոզվումք ձեւավորվեց մեզանում՝ ռազմական փոքր օպերացիայի դեպքում անգամ թուրք ասկարները չեն կարող չհասանել...

Ահա այսպիսի մտածումներով էլ վերադարձանք Սեն լճից՝ առայժմ ձեռնպահ մնալով այցն ավելի հանգամանակից ներկայացնելուց, նկատի ունենալով, որ որոշ տեղեկություններ կարող են եւ պետական գաղտնիք համարվել:

Վիճակը, միանշանակ, հանդուրժելի չի կարելի, լճի մերձակայքի բարձունքներից ժամ առաջ պետք է բշտել ազերներին, մանավանդ

որ Ներքին Խնձորեսկի մատուցներում ընթացող բանակցությունների ձգձգումը մի տեսակ խաղի տպավորություն է թողնում:

Երկրամասից ազերիներին դուրս բշտելու գործը, որքանով հասկացանք, կարող է արժանապատվորեն իր վրա վերցնել ու հաղթական հանգրվան հասցնել հայոց ազգային բանակը:

Հ.Գ. Վերադարձին՝ Մթնաձորի ստորոտում, հանդիպեցինք Ակներ գյուղի անասնապահներին, ովքեր պատրաստվում էին առաջիկա օրերին գյուղի անասունները Մթնաձորից տեղափոխել գյուղի ամառային արոտավայրեր, որ Սեն լճի մերձակայքում են:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԵՎՐՈՊԱՅԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՂԵՆԱՊԱՆՆԵՐՆ ԱՅԳԵԼԵԼ ԵՆ ԽԱՅ-ԱՊՐԵՔՇԱՆԱԿԱՆ ԱՍԻՄԱՆ

ԶԶ ՀՈՒ ԿՈՐԱՊՈՒՍԻ շտաբի պետ Սամվել Մինասյանը մայիսի 20-ին Գորիս ժամանած եվրոպական երկրների 11 ղեսպանների և եվրամիության 3 ներկայացուցչի ներկայացրեց իրադրությունը Խայ-ադրեքշանական սահմանին՝ ՍԵՆ Լճի տարածքում:

Սամվել Մինասյանը Նախ նշեց, որ Խայ-ադրեքշանական սահմանն անցնում է դեռևս Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության անդ-

միստրատիվ սահմանագծով, 1969 թվականին կատարվել է սահմանների ճշգրտում, որոնք վավերացվել են փաստաթղթերով, ստորագրություններով, կնիքներով:

«Մայիսի 12-ին առավոտյան ժամը 7-ի դրությամբ նկատվել է ադրեքշանական զինված ուժերի զինվորականների տեղաշարժը ՍԵՆ Լճի տեղամաս: Եվ իրադրության գնահատման արդյունքում պարզվել է, որ ՍԵՆ Լճի թիկունքային մասում առկա են փոքր ստորաբաժանումներ, որոնք, ըստ երևույթին, **Շարունակությունը՝ էջ 8**



Միջազգային արձագանքներ՝ Սյունիքի հատվածում ՀՀ սահմանի նկատմամբ Ադրբեջանի ոտնձգություններին

ԱՄՆ Պետդեպը սադրիչ է անվանել Հայաստանի հետ սահմանին Ադրբեջանի գործողությունները՝ պահանջելով դուրս բերել իր զորքերը

ԱՄՆ-ի իշխանությունները Հայաստանի հետ սահմանին Ադրբեջանի գործողությունները սադրիչ են համարում։ Հեղափոխական ճեպագրույցի ժամանակ հայտարարել է Պետդեպարտամենտի մամուլի ծառայության ղեկավարի տեղակալ Ջալինա Պորտերը, փոխանցում է SUSA-ը։

Նրա խոսքով՝ ԱՄՆ-ն ուշադիր հետևում է Սյունիքի մարզում ստեղծված իրավիճակին։

«Մենք ուշադիր հետևում ենք իրավիճակին։ Ուժերի տեղաշարժն անպատասխանատու է, ինչպես նաև Հարդարացված և սադրիչ։ Մենք հույս ունենք՝ Ադրբեջանն անմիջապես դուրս կբերի իր բոլոր ուժերը և կդադարեցնի հետագա սադրանքները», – ասել է նա։

14.05.2021

ԱՄՆ Նախագահի խորհրդականը Ալիևի հետ գրոցում սահմանին ռազմական տեղաշարժերը անպատասխանատու և սադրիչ քայլ է անվանել

ԱՄՆ Նախագահի ազգային անվտանգության հարցերով խորհրդական Ջեյք Սալիվանն առանձին հեռախոսազրույցներ է ունեցել Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Ադրբեջանի Նախագահ Իլհամ Ալիևի հետ։ Այս մասին հայտնում է Սպիտակ տունը։

Հեռախոսազրույցների ընթացքում Սալիվանը վերահաստատել է ԱՄՆ հանձնառությունը՝ Հարավային Կովկասում հաստատելու խաղաղություն, անվտանգություն ու բարօրություն։

«Նա մտահոգություն է հայտնել Հայաստանի և Ադրբեջանի միջև վերջին լարվածության դեպքի առթիվ և շեշտել, որ ռազմական տեղաշարժերը չդնարկացված սահմանների մոտ անպատասխանատու և սադրիչ քայլեր են։ Նա ողջունել է երկու կողմերի միջև շարունակվող շփումները և երկու առաջնորդների հանձնառությունը՝ խնդիր կարգավորելու խաղաղ ճանապարհով», – ասվում է Սպիտակ տան հայտարարության մեջ։

ԱՄՆ Նախագահի խորհրդականն անհրաժեշտ է համարել երկու երկրների կողմից միջազգային սահմանների դեմարկացիայի վերաբերյալ պաշտոնական քննարկում իրականացնելը։ Նա ևս մեկ անգամ վերահաստատել է ԱՄՆ հանձնառությունը՝ հասնելու տարածաշրջանային հաշտեցման ինչպես երկկողմ հարաբերությունների միջոցով, այնպես էլ որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկիր։

18.05.2021

Իրանն անընդունելի է համարում Հայաստանի սահմանային որևէ փոփոխություն

Իրանի Իսլամական Հանրապետությունը չի ընդունում տարածաշրջանի որևէ փոփոխություն, տարածաշրջանի երկրների տարածքային ամբողջականությունը պետք է պահպանվի։ Այս մասին հայտարարել է Իրանի Իսլամական Հանրապետության Ազգային ժողովի ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության հանձնաժողովի Նախագահ Մոջթաբա Չոլսուրին՝ անդրադառնալով հայ-ադրբեջանական սահմանին ստեղծված իրավիճակին և Ադրբեջանի գինված ուժերի կողմից ՀՀ տարածք ներխուժման դեպքին։

«Իրանի Իսլամական Հանրապետության դիրքորոշումը շատ պարզ, հստակ և որոշիչ է։ Մենք չենք ընդունում տարածաշրջանի որևէ փոփոխություն, տարածաշրջանի երկրների տարածքային ամբողջականությունը պետք է պահպանվի, մենք չենք ընդունում որևէ վերտարածաշրջանային ուժ մեր սահման-

ների մոտ։ Եթե Հայաստանի տարածքի մի մասը ցանկանան վերցնել, և մեր սահմանները փոփոխության ենթարկվեն, այսինքն՝ ունենանք նոր հարևան, դա մեզ համար ընդունելի չէ։ Անցյալի սահմանները պետք է ամբողջությամբ լինեն պաշտպանված, և պետք է պահպանվի Իրանի Իսլամական Հանրապետության ընդհանուր սահմանը Հայաստանի հետ», – հայտարարել է Մոջթաբա Չոլսուրին։

Իրանի Աժ ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության հանձնաժողովի Նախագահը նշել է, որ երկու երկրներն իրավասու են պահպանել իրենց տարածքային ամբողջականությունը։ Ըստ նրա՝ Իրանը սատարում է Ադրբեջանի դիրքորոշումը՝ իր տարածքային ամբողջականության պահպանման հարցում, և նաև պաշտպանում է Հայաստանի դիրքորոշումը՝ իր տարածքային ամբողջականությունը, հողը և Իրանի հետ հարևանության սահմանը պահպանելու հարցում։

«Մենք երկու երկրների հետ հարևաններ ենք և, ելնելով Նախկինում ունեցած իրավիճակից, առանց տարածաշրջանում որևէ փոփոխություն ընդունելու, մենք աջակցում ենք երկու երկրների տարածքային ամբողջականությանը», – հավելել է Չոլսուրին։

17.05.2021

Հեռախոսազրույց՝ Էմանուել Մակրոնի հետ

Հայաստանի և Ֆրանսիայի առաջնորդները քննարկել են Սյունիքի մարզում ադրբեջանական զինված ուժերի կողմից Հայաստանի ինքնիշխան տարածք ներխուժելու հետևանքով ստեղծված իրավիճակն ու այն հանգուցալուծելու քայլերը։

Ֆրանսիայի Նախագահն իր գորակցություն է հայտնել Հայաստանի իշխանություններին ու հայ ժողովրդին՝ խնդիրը խաղաղ կարգավորելու գործում։ Էմանուել Մակրոնը վերահաստատել է Ֆրանսիայի հավատարմությունը Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության նկատմամբ և ընդգծել է Հայաստանի սուվերեն տարածքից ադրբեջանական զինված ուժերի անհապաղ դուրսբերման անհրաժեշտությունը։

Էմանուել Մակրոնն ընդգծել է, որ Ֆրանսիան պատրաստ է հետագայում ևս իր նպաստը բերել Հայաստանի առջև ծառացած մարտահրավերների լուծմանը, մեր երկրի զարգացմանն ու առաջընթացին։

13.05.2021

Հնդկաստանը կոչ է արել Ադրբեջանին հետ բաշել գորքերը Հայաստանի սահմաններից ու գերծ մնալ սադրանքներից

Հնդկաստանը մտահոգությամբ է հետևում Հայաստանի ու Ադրբեջանի սահմանին տիրող իրադրությանը։ Այս մասին հայտարարել է Հնդկաստանի արտաքին գործերի Նախարարության խոսնակը՝ ի պատասխան հայ-ադրբեջանական սահմանի վերաբերյալ լրատվամիջոցների հարցումներին։

«Ռազմական տեղաշարժերի միջոցով սահմանային խախտումները կարող են ապակայունացնել իրավիճակն ու հանգեցնել ռազմական գործողությունների վերսկսման։ Հորդորում ենք խախտած կողմին անհապաղ հետ բաշել գինված ուժերն ու կասեցնել ցանկացած հետագա սադրանք», – համաձայն Նախարարության պաշտոնական կայքի՝ հայտարարել է խոսնակը։

Նա ընդգծել է, որ Հնդկաստանը մշտապես կողմ է արտահայտվել երկկողմ վեճերի խաղաղ կարգավորմանը՝ բաղաբական ու դիվանագիտական ճանապարհներով։ «Հարավային Կովկասի տարածաշրջանում խաղաղությունն ու կայունությունը կարևոր են տարածաշրջանային անվտանգության հեռանկարում», – նշել է խոսնակը։

19.05.2021



Ինժեներական աշխատանքներ կատարելիս ադրբեջանական ուժերի կողմից շրջափակվել և գերեվարվել է ՀՀ ՉՈՒ վեց զինծառայող

Մայիսի 27-ի վաղ առավոտյան, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի սահմանային հատվածում, ՀՀ ՉՈՒ Ռ զորամասի պահպանության տարածքում ինժեներական աշխատանքներ կատարելիս, ադրբեջանական զինված ուժերի զինծառայողների կողմից շրջափակվել և գերեվարվել է ՀՀ ՉՈՒ վեց զինծառայող։ Ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցառումներ՝ գերեվարված զինծառայողներին վերադարձնելու ուղղությամբ։

Ի հավելումն Նախորդ հաղորդագ-

րության՝ հայտնում ենք, որ ՀՀ տարածքում՝ առանց սահմանը հատելու ինժեներական աշխատանքներ կատարած ու գերեվարված անձինք են պայմանագրային զինծառայողներ Ա. Ն. Աբգարյանը, Ի. Ա. Սարգսյանը, Վ. Վ. Սարգսյանը, Բ. Ս. Օհանյանը, Ա. Գ. Բուդոյանը, Վ. Օ. Ռաֆայելյանը։ Ադրբեջանի Հանրապետության պաշտպանության Նախարարության տարածած հայտարարությունը, ըստ որի՝ ադրբեջանական ՉՈՒ կողմից գերեվարված հայ զինծառայողները գտնվել են Ադրբեջանի տարածքում, չի համապատասխանում իրականությանը։

Գրանցման համար փաստաթղթեր է ներկայացրել 23 կուսակցություն և կուսակցությունների 4 դաշինք

2021 թվականի հունիսի 20-ի Աժ արտահերթ ընտրություններին մասնակցելու նպատակով կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակների գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը Կենտրոնական ընտրական հանձնաժողով կարող էին ներկայացվել

մինչև ս.թ մայիսի 26-ը՝ ժամը 18.00-ն։

Սահմանված ժամկետում Կենտրոնական ընտրական հանձնաժողով գրանցման համար փաստաթղթեր է ներկայացրել 23 կուսակցություն և կուսակցությունների 4 դաշինք։

Կուսակցությունների դաշինքներ

- «Հայաստան» դաշինք
- «Ազատ հայրենիք» դաշինք
- «Պատիվ ունեմ» դաշինք
- «Հիդրոյան- Բաբաջանյան ժողովրդավարների դաշինք» դաշինք

Կուսակցություններ

- «Քաղաքական պայմանագիր» կուսակցություն
- «Արդար Հայաստան» կուսակցություն
- «Հանրապետություն» կուսակցություն
- «Համահայկական ազգային պետականություն» (ՀԱՊ) կուսակցություն
- «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն
- «Հայոց Հայրենիք» կուսակցություն
- «Ազգային օրակարգ» կուսակցություն
- «Քրիստոնեա-ժողովրդավարական» կուսակցություն
- «Հայաստանի Եվրոպական» կուսակցություն
- «Քաղաքացու որոշում սոցիալ-դեմոկրատական» կուսակցություն
- «Մեր տունը Հայաստանն է» կուսակցություն
- «Ազգային-ժողովրդավարական բևեռ» կուսակցություն
- «Միասնական հայրենիք» կուսակցություն
- «5165 ազգային պահպանողական շարժում» կուսակցություն
- «Լուսավոր Հայաստան» կուսակցություն
- «Վերելք» կուսակցություն
- «Ազատություն» կուսակցություն



- «Ազատական» կուսակցություն
- «Հայ ազգային կոնգրես» կուսակցություն
- «Ինքնիշխան Հայաստան» կուսակցություն
- «Չարթունք» ազգային քրիստոնեական կուսակցություն
- Հայաստանի դեմոկրատական կուսակցություն
- «Հայոց Արծիվներ. Միասնական Հայաստան» կուսակցություն

ՀՀ ընտրական օրենսգրքի և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սահմանված ժամանակացույցի համաձայն՝ Աժ արտահերթ ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակների գրանցումը կիրականացվի մինչև ս.թ. մայիսի 31-ը՝ 18:00-ն։

Հավերժ փառք Արցախյան պատերազմում նահատակված հայոց քաջորդիներին



Հավարչ Մուրադյան. երբ նահատակվում են լավագույնները

Ծնվել է 1996-ի նոյեմբերի 19-ին Արցախյան 1-ին պատերազմի մասնակից Մարտուն Մուրադյանի ընտանիքում: Մանկուց հորից լսել է նրա մարտական ընկերների սիրաբանների մասին, դաստիարակվել կապանյան ազատամարտի նվիրյալների ոգով: Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոցում սովորելիս (2013 թ.) հաղթել է «Ֆլեթս» միջազգային մրցույթում եւ մեկ տարով մեկնել ԱՄՆ Օրեգոն նահանգ՝ ուսումը շարունակելու: Վերադառնալով Կապան՝ ուսումը շարունակել է Եղեգի միջնակարգ դպրոցում: 12-րդ դասարանում ընդունվել է Հայաստանի ամերիկյան համալսարան: 2015 թ. ամռանը զորակոչվել է հայոց բանակ. գնդացրորդ էր, մասնակցել է Ապրիլյան բառայա պատերազմին: 2017 թ. գինձառայությունն ավարտելուց հետո ուսումը շարունակել է Ամերիկյան համալսարանում: 2019 թ. անդամագրվել է «Արծիվ-30 Արարատ» մահապարտների ռազմահայրենասիրական կազմակերպությանը:

«Հավարչն ինձ հետ կիսվում էր իր մտորումներով, ասում էր՝ երբ պատերազմ սկսվի, անպայման գնալու եմ: Ասում էր, որ շուտով պատերազմ է սկսվելու և Ադրբեջանին օժանդակելու է Թուրքիան», - նշեց Հավարչի մայրը:

2020 թ. սեպտեմբերի 27-ին «Արծիվ-30» մահապարտների հատուկ խմբի հետ մեկնել է Արցախի Հանրապետություն: Մարտակերտի համար մարտերը ծանր էին ու վճռական. ցավոք, երկու օր հետո՝ սեպտեմբերի 29-ին, գնդացրորդ Հավարչ Մուրադյանը բռնեց հավերժի ճամփան...

ԿԱՅՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

մից, լավ ընկերներ ուներ, ովքեր ամեն րոպե պատրաստ էին նրան օգնության հասնել, բայց չար պատերազմի դեմ բոլորս ենք անգործ: Հիմա միայն մի զգացողություն կա՝ կարոտ...»:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը պատերազմ սկսեց... Մանուկը երկու օր սպասեց, որ իրեն կկանչեն զորահավաքի, անհամբեր էր, ընկերներն այնտեղ էին, ինքը՝ այստեղ, մնալ չէր կարող՝ կամավորագրվեց...

Հինկոմիսարիատի բակից զանգահարել էր բորջը, տեղեկացրել, որ մեկնում է, բույրը համոզել էր, խնդրել, որ չգնա: Բայց Մանուկն անդրդվելի էր, նա բորջը հիշեցրել էր, որ հայրն էլ է հայրենիքը կռվով պաշտպանել՝ «Մենք Կապանում ենք ապրում, եթե կապանի տղամարդը թուրքի դեմ չկանգնի, ո՞վ պիտի իրա տունը պահի...»:

Նրանք, ովքեր Մանուկին տեսել են ռազմաճակատում, հպարտանում են՝ «Լավ է, որ մեր մեջ դեռ էր տեսակը կա, Մանուկը մի ուրիշ կերպ էր կռվում, իմ հանդիպած տղերքի մեջ Մանուկն առանձնանում էր բացառիկ անվախությամբ, հպարտ եմ, որ հայ ազգում Մանուկի պես տղերք կան, նրանք հույս են ներշնչում, որ մեր ազգը կհաղթահարի ու կհաղթանակի...»:

Նոյեմբերի 9-ին Դավիթ բեկ գյուղի ինքնապաշտպանական մարտերում Մանուկն անմահացել է. հայ ազգը կորցրել է անվախ ու քաջ երիտասարդի...



Արտաշես Մարտիրոսյան. հավերժական է նրա գոհվելու ցավը

Ծնվել է 2002թ. մարտի 17-ին Զաքարյան քաղաքում: Մանկավարժի ընտանիքում ծնված միևուրժար Արտաշեսը մեծացել է սիրո եւ հոգատարության մթնոլորտում: Արտաշեսն այն մանուկներից էր, ովքեր զարմացնում են իրենց գիտելիքների անսահման պաշարով, այն երիտասարդներից, ովքեր ակնածանք են արթնացնում իրենց անբասիր վարքով եւ դաստիարակվածությամբ, այն երիտասարդներից, որոնցով հպարտանում են ոչ միայն ծնողները, այլև հարեաններն ու ամբողջ քաղաքը: Սիրում էր նկարել, նկարում էր պայծառ հերոսներ, որոնք իր հոգու անաղարտությունն էին ցույց տալիս: Միջնակարգն ավարտելուց հետո ընդունվել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի տեղեկատվական տեխնոլոգիաներ բաժինը, մտադիր էր լավ ծրագրավորող դառնալ, SS ոլորտը ձեռք էր բերելու տրամաբանորդ ու տաղանդավոր գործիչ...

2019թ. հուլիսի 19-ին զորակոչվել է բանակ: Արցախում ծառայելը նա պատիվ էր համարում: Սպայական անձնակազմն անմիջապես նկատեց խելացի պատանուն՝ նրան վստահվեց հրետանու նշանառու լինելու բարդ եւ պատասխանատու պարտականությունը:

2020թ. սեպտեմբերի 27-ին սկսվեց պատերազմը. նշանառու Մարտիրոսյանի իր պրոֆեսիոնալիզմով փայլում էր մարտադաշտում՝ հարյուրավոր խոցված թիրախներ, հաղթանակի ուրախություն՝ ամեն վերացված թիրախի հետ... Հնարավորության դեպքում զանգահարում էր տուն. միշտ մի պատասխան ուներ մոր բոլոր անհանգստություններին՝ «Լավ եմ»: Բայց վերջին անգամ, վերջին խոսակցության ժամանակ մայրն ինչ-որ բան կանխազգաց, բանի որ որդին նույն առոյգությամբ չէր պատասխանել՝ սովորական դարձած էր «Լավ եմ»-ի փոխարեն ասել էր՝ «Ոչինչ»:

Մոր սիրտը չէր խաբում, մոր անհանգստությունը, ցավոք, զուր չէր...

Հոկտեմբերի 27-ին՝ իր ծառայության 100-րդ օրը, հայ ազգը եւս մի՝ տակավին երեխա հերոս ունեցավ: Հավերժական չէ կյանքը, բայց իր կարճ կյանքում Արտաշեսն այնքան սիրված էր, որ նրա գոհվելու ցավը հավերժական է...



Տիգրան Հայրապետյան. լավագույններին խլեց պատերազմը

Ծնվել է 2000 թ. սեպտեմբերի 13-ին Մեղրիում: Միջնակարգ կրթությունը ստացել է Մեղրիի N1 դպրոցում: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է ԵՊՀ մաթեմատիկայի եւ մեխանիկայի բաժին:

Տիգրանի մոտ մաթեմատիկական հատուկ ընդունակություններն ուսուցչուհին նկատել էր դեռ առաջին դասարանում: Մայրը պատմում է, որ Տիգրանը կարողանում էր հաշվիչից արագ գումարել բառակիշ, հնգակիշ, վեցակիշ մի քանի թիվ: Տիգրանը ծնողների առաջնեկն էր, ծնողները նրանից շատ-շատ մեծ պահանջներ ունեին՝ հաշվի առնելով նրա բնատուր ունակությունները, բայց Տիգրանը, ում դպրոցական ծրագրային նյութերը, հատկապես մաթեմատիկայի, շատ հեշտությամբ էին տրվում, շատ աշխատել չէր սիրում: Ի բնե քախոս Տիգրանն իր իմացածն ի ցույց հանելու հակում չուներ. մայրը հիմա ափսոսանքով է հիշում իր բացարձակ պահանջները որդուց, ինքն ուզում էր աշխարհը տեսնի, թե ինչքան խելացի ու կրթված է իր տղան, իսկ Տիգրանը հազար ու մի հետաքրքրություն ուներ, ազատատենչ պատանին երեւի ինչ-որ բան կանխազգայով՝ ուզում էր հասցնել լինել ամենուր, հասցնել ամեն ինչ: Նկարչական դպրոց էր բացվել Մեղրիում. Տիգրանի առաջին աշխատանքն այնքան ճիշտ էր թե՛ գույների, թե՛ գծագրի առումներ, որ զարմացրել ու հիացրել էր երիտասարդ ուսուցչուհուն:

Տիգրանը զորակոչվելուց առաջ մասնակցել էր պատվո պահակային գնդի համար պատանիների ընտրությանը. նրա թե՛ արտաքին, թե՛ մտավոր տվյալները համապատասխանում էին. նա առաջիններից մեկն էր ընտրվել: Ծնողները համոզված էին, որ իրենց որդին Ստեփանակերտի պատվո պահակային վաշտում է ծառայելու. զորակոչի հաջորդ օրը Տիգրանը զանգահարում է մորն ու տեղեկացնում, որ իր երազանքը կատարվել է՝ ծառայելու է Մատաղիսում...

Բանակային կյանքից Տիգրանը ոչինչ չէր պատմում, նույնիսկ մեղավներ ստանալու մասին չէր տեղեկացրել, մայրը նրա նահատակվելուց հետո հրամանատարներից է իմացել, որ որդին բազմաթիվ մեղավներ ունի՝ «Մարտական հերթապահության», «Քաջարի մարտիկ», «Լավագույն մարզիկ», «Բանակի գերազանցիկ». շարքում վերջինը «Մարտական ծառայություն» մեդալն է, որը Տիգրանին շնորհվել է հետմահու:

Տիգրանը հետախույզ էր, մասնագիտություն, որում՝ գիտելիքների ու ֆիզիկական

տվյալների շնորհիվ, փայլում էր:

Սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը պատերազմ սկսեց: Հետախույզ, դիրքի ավագ, սերժանտ Տիգրան Հայրապետյանն առանց խուճապի, գիտակից, հասուն զինվորականի պես անցավ իմացածը մարտադաշտում կիրառելուն: Ծնողների անհանգիստ զանգերին Տիգրանը հանգստացնող հորդորով էր պատասխանում, ասում, որ ինքն ապահով է, որ ամեն ինչ հրաշալի է լինելու:

Հոկտեմբերի 2-ին Տիգրանը վերջին անգամ է զանգահարել ընտանիքի անդամներին. հետո ամիսներ շարունակ ծնողները սպասում էին լուրի, սփոփանքի, ծայնի... Միայն հինգ ու կես ամիս անց ԴԵԹ հետազոտությունը հաստատեց՝ Տիգրանը գոհվել է...



Արայիկ Սաֆյան. նահատակված կապիտանը Բռնակործից

Ծնվել է 1989 թ. մայիսի 3-ին Սիսիանում: Միջնակարգ կրթությունը ստացել է Բռնակործի միջնակարգ դպրոցում: 2006-2010 թթ. սովորել է Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանում: 2010 թ. գործուղվել է Արցախ, 7 տարի ծառայել Մարտունու զորամասում: 2017 թ. նշանակվել է Նորավանի զորամասի հրաձգային վաշտի հրամանատար: Ամուրի էր:

Հինվորական դառնալն Արայիկի մանկության երազանքն էր, եղբայրը պատմում է, որ դպրոցական տարիներին Արայիկի դասընկերներից շատերն էին երազում զինվորական դառնալու մասին, եւ դեռ պատանի Արայիկն իր կյանքը պատկերացնում էր միայն որպես զինվորական:

2016 թ. վաշտի հրամանատար Արայիկ Սաֆյանը մասնակցել է Ապրիլյան պատերազմին:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը պատերազմ սկսեց. հոկտեմբերի 3-ին Արայիկ Սաֆյանը մեկնեց ռազմաճակատի հարավային հատված՝ Ջրական /Ջաբրայիլ/: Արայիկը համարձակ, նախաձեռնող, խելացի զինվորական էր. նրա հրամանատարությամբ վաշտը թշնամու շրջափակման-ոչնչացման մի քանի գործողություն է կատարել, որոնք ավարտվել են հաջողությամբ: Հոկտեմբերի 9-ին կապիտան Սաֆյանի գլխավորած վաշտը վերադարձել է պաշտպանության տեղամաս: Մեկ շաբաթ առանց հանգստի մարտական գործողություններ վարած սպան եկել էր հանգստանալու, եկել էր հպարտ, որ կարողացել է թշնամու մարդուժին մեծ վնաս պատճառել...

Հոկտեմբերի 10-ին թշնամու անօդաչուն թիրախավորում է այն խրամատը, որում կապիտան Սաֆյանն էր. գոհվում են շատերը, նահատակվում է նաեւ հայրենասեր, նպատակասլաց, խելացի կապիտան Արայիկ Սաֆյանը:

Երիտասարդ սպան բազմաթիվ երազանքներ ու նպատակներ ուներ, որոնցից մեկն էլ կին ու երեխաներ ունենալն էր. ավմո, այդ նպատակներն այլեւս ու ընդմիջտ անկատար կմնան:

ԷՏԻ ՆՅՈՒԹԵՐԸ ԴԱՏՐԱՍՏԵՑ
ՏԻԳՐԱՆՈՒՅԻ ԲԱԴԱԼՅԱՆ

Սիսիան համայնքում արձանագրվել է աղիքային վարակներին բնորոշ ախտանշաններով 296 դեպք

2021 թվականի մայիսի 9-ից 11-ն ընկած ժամանակահատվածում աղիքային վարակիչ հիվանդությունների ախտանշաններով Սիսիանի բժշկական կենտրոն է դիմել 13 բնակիչ, որոնցից 5-ը հոսպիտալացվել է: Այս մասին հայտնում են ՀՀ առողջապահության նախարարությունից:

Համաճարակաբանական հետազոտությունների շրջանակում ՀՀ ԱՆ հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի մասնագետները մայիսի 11-ին իրականացրել են բակային համայցեր, ինչի արդյունքում հայտնաբերվել է աղիքային վարակիչ հիվանդություններին բնորոշ ախտանշաններով և 199 բնակիչ: Բնակիչների

մեծամասնությունն ունեցել է նույն զանգատները՝ փսխում, լուծ, թուլություն և ջերմաստիճանի բարձրացում մինչև 38°C:

Մայիսի 12-ին Սիսիանի բժշկական կենտրոն դիմել է աղիքային վարակիչ հիվանդությունների ախտանշաններով և 14 բնակիչ և բակային համայցով հայտնաբերվել է ևս 70 հիվանդ:

Այսօրվա դրությամբ՝ Սիսիան համայնքում արձանագրվել է աղիքային վարակներին բնորոշ ախտանշաններով 296 դեպք (դեպքերից 281-ը մինչև 18 տարեկան են, իսկ 15-ը՝ մեծահասակ): Սիսիանի բժշկական կենտրոնում ստացիոնար պայմաններում բուժումը շարունակում է 5 հիվանդ, իսկ զանգատ ունեցող մյուս բնակիչները բուժում են ստանում ամբուլատոր պայմաններում: Բոլոր հիվանդների վիճակը զնադարավոր է միջին և թեթև. ծանրության դրական շարժընթացով: Որպես բռնկման հավանական պատճառ՝ դիտարկվում է ջրային գործոնը: Համաճարակաբանական հետազոտությունների ընթացքում պարզվել է, որ դեպքերին նախորդել է վթար՝ բնակավայրի ջրամատակարարման համակարգում, որի վերացման ուղղությամբ իրականացվել են աշխատանքներ:

Լաբորատոր հետազոտությունների նպատակով իրականացվել է բնակավայրի խմելու ջրի և հիվանդների կենսասնույթների նմուշառում:

12.05.2021



Սիսիանում ջրի մեջ սանիտարական նորմերից շեղումներ չեն արձանագրվել

«Վեոլիա ջուր» ՓԲԸ-ն պարզաբանում է տարածել Սիսիանում աղիքային վարակիչ դեպքերի մասին:

«Ի պատասխան Սիսիանում աղիքային վարակի դեպքերը մատակարարվող խմելու ջրի որակով պայմանավորող որոշ լուսավորչության հրապարակումների՝ «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ն հարկ է համարում հայտնել հետևյալը:

Ստացված ահազանգի հետքերով, մայիսի 11-ին բաղաձի տարբեր վայրերից իրա-

կանացվել է ջրի արտապահային նմուշառումներ: Ընկերության լաբորատորիայում կատարված հետազոտությունով ջրի մեջ սանիտարական նորմերից շեղումներ և որակին ներկայացվող պահանջներին անհամապատասխանություն չի արձանագրվել:

Հանրության շրջանում թուրմամբումներից և տարատեսակ լուրերի տարածումից խուսափելու համար, ընկերությունը կոչ է անում շԼՄ-ներին ձեռնպահ մնալ չստուգված տեղեկատվության հրապարակումից»:

12.05.2021

«Հնարավոր չէ». Սիսիանի ԲԿ-ի տնօրենը՝ աղբեջանցիների կողմից ջրի թունավորման լուրերի մասին

Սիսիանի ԲԿ-ի տնօրենը Sputnik Արմենիայի հետ զրույցում անդրադարձել է համայնքում գրանցված զանգվածային թունավորման դեպքին և դրա շուրջ պատվող լուրերին:

Սիսիանի բժշկական կենտրոնի տնօրենը կարծում է՝ կեղծ են լուրերը, ըստ որոնց՝ Սիսիանում 296 անձանց թունավորման պատճառն աղբեջանցիների կողմից ջրի թունավորումն է, Sputnik Արմենիայի հետ զրույցում հայտնեց ԲԿ-ի տնօրեն Անի Գրիգորյանը:

Առողջապահության նախարարությունը հայտնել էր, որ Սիսիան համայնքում արձանագրվել է աղիքային վարակներին բնորոշ ախտանշաններով 296 դեպք (դեպքերից 281-ը մինչև 18 տարեկան են, իսկ 15-ը՝ մեծահասակ): Լուրեր էին շրջանառվում, որ աղբեջանցիները թունավորել են մեր աղբյուրներից մեկը:

«Հնարավոր չէ, աղբեջանցիները չեն կարող թունավորել մեր աղբյուրները, քանի որ մեր ջրի ակունքները Շափում են գտնվում (Շափին հեռու է աղբեջանական վերահսկողության ներքո գտնվող տարածքներից-խմբ): Կարծում եմ՝ կեղծ տեղեկատվություն է դա: Բացի այդ, գուցե սովորական էնտերովիրուսներ լինեն, որոնք երեխաների մոտ լինում են այս սեզոնին», – ասաց Գրիգորյանը:

Նրա խոսքով՝ երեկ օրվա ընթացքում Սիսիանում աշխատել են և՛ մարզի առողջապահության վարչության, և՛ Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի աշխատակիցները Երևանից ու Գորիսից: Մասնագետները ինչպես ջրի, այնպես էլ թունավորում ստացածների կղանքի

փորձանմուշներն ուղարկել են փորձաքննության. պատասխանը հայտնի կլինի վաղը՝ օրվա վերջին:

Գրիգորյանը նշեց՝ մինչև չլինեն փորձաքննության արդյունքները, որևէ մեկը չի կարող պնդել, որ թունավորումը ջրից է եղել:

Սիսիանի ԲԿ-ի տնօրենը տեղեկացրեց նաև, որ վերջին ժամանակներում թունավորման նման զանգվածային դեպք չէր գրանցվել իրենց մոտ:

Անդրադառնալով լուրերին, թե նաև գինեծառայողներ են թունավորվել՝ Գրիգորյանը հերքեց դրանք. «Որևէ գինեծառայող մեզ չի դիմել նման զանգատով: Ավելին, քիչ առաջ գրուցել եմ հոսպիտալի տնօրենի հետ, և նրանց մոտ էլ նման զանգատներով որևէ գինեծառայող չի դիմել»:

ԲԿ-ի տնօրենի խոսքով՝ թունավորվածները հիմնականում շատ թեթև են տառնում հիվանդությունը, ծանր դեպքեր չեն ունեցել՝ միայն մի քանիսն են միջին ծանրության եղել: Գրիգորյանը վստահեցնում է՝ այս պահին աստիճանաբար մարում է գնում:

Հիվանդանոցում 5 երեխա է բուժում ստանում, որոնց վիճակը միջին ծանրության է, սակայն էական դրական դինամիկա կա նրանց մոտ: Մեծահասակների շրջանում էլ նոր դեպքեր չեն արձանագրվել:

Հիշեցնելն է, որ առողջապահության նախարարությունը տեղեկացրել էր նաև, որ թունավորվածների մեծամասնությունն ունեցել է նույն զանգատները՝ փսխում, լուծ, թուլություն և ջերմաստիճանի բարձրացում մինչև 38°C:

12.05.2021



«Գորիս» ԲԿ-ի տնօրենը և փոխտնօրենը պարգևատրվել են մեդալներով

Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանի հրամանագրերով, պատերազմի հետևանքով տուժած զինծառայողներին և խաղաղ բնակչությանն անհրաժեշտ բժշկական և մարդասիրական օգնություն ցուցաբերելու գործում ներդրած ավանդի և դրսևորած անձնավորության, ինչպես նաև կորոնավիրուսային համավարակի կանխարգելման, վերահսկման և բուժման աշխատանքների կազմակերպման և իրականացման գործում ներդրած ավանդի համար, առողջապահության համակարգի մի խումբ աշխատակիցներ պարգևատրվել են մեդալներով:

Հանրապետության նախագահի նստա-



վայրում տեղի է ունեցել պարգևատրման հանդիսավոր արարողությունը:

Նախագահ Արմեն Սարգսյանը պետական բարձր պարգևներ է հանձնել և ցուցաբերած անձնվեր աշխատանքի համար շնորհակալություն հայտնել բուժաշխատողներին ու առողջապահական համակարգի ներկայացուցիչներին:

Պարգևատրվածների թվում են Գորիսի բժշկական կենտրոնի տնօրեն Դավիթ Մաշուրյանը և կազմակերպչական գծով փոխտնօրեն Սևակ Մարտիրոսյանը:

25.05.2021



Կապանի բժշկական կենտրոնը ամենագնաց ռեանիմոբիլներ ստացավ

ՀՀ առողջապահության նախարարության կողմից Կապանի բժշկական կենտրոնին հատկացված ամենագնաց շտապօգնության մեքենաները տեղ հասան: Դրանք ձեռք են բերվել պետական միջոցներով, մեկը կտրամադրվի ԲԿ-ի հիվանդանոցին, մյուսը՝ պոլիկլինիկային:

Մեքենաները ռեանիմոբիլներ են ու հագեցած են առաջին օգնության համար անհրաժեշտ սարքավորումներով: Դրանք կօգնեն

բարելավել բարձր լեռնային գոտիների բնակչության սպասարկման որակը, քանի որ կարող են հաղթահարել բարդ ճանապարհները:

Նման մեքենաների հատկացման պետական ծրագիրը շարունակական կլինի նաեւ մարզի մյուս համայնքների շտապօգնության ծառայությունների համար:

ՍՅՈՒՆԻԷԻ ՄԱՐԴԴԵՍՈՒՆ
21.05.2021

Խոզնավարում էինք. կյանքը բնականոն հուն է մտնում, տարիանված երեխաները գյուղ են վերադարձել



Խոզնավար գյուղի շուրջ ստեղծված դրամատիկ վիճակը լարվածության նոր ալիք բարձրացրեց առանց այդ էլ անհանգիստ եւ անորոշության թանձր մշուշով պատված Սյունիքում...

Իրավիճակին տեղում ծանոթանալու նպատակով՝ մայիսի 21-ին «Սյունյաց երկրի» ստեղծագործական խումբը Խոզնավարում էր:

Գյուղ գնացինք Վերիշեն-Ղազիգյոլ ճանապարհով կամ Զայեռուռն լեռնագագաթով ձգվող ճանապարհով, որ Սեւ լճից արեւելք է: Կառուցվել է խորհրդային իշխանության վերջին տարիներին: Դա Գորիս կենտրոնը Խանածախի ենթաշրջանի երեք գյուղին կապող ամենակարճ ու հարմար ճանապարհն է: Անգամ ձմռանը, երբ այդ կողմերում սաստիկ ձնաբուք է լինում, մարդիկ գերադասում են օգտվել դրանից:

Մեր այցը համընկավ Սյունիքի մարզպետ Մելիքետ Պողոսյանի, ինչպես եւ Սյունիքի հարցերով ՀՀ կառավարության միջգերատեսչական աշխատանքային խմբի՝ Խոզնավար կատարվող այցին:

Երթուղին պատահական չէր ընտրված. մարզպետն ուզում էր միջգերատեսչական աշխատանքային խմբին ցույց տալ ենթաշրջանի համար ռազմավարական նշանակություն ունեցող այդ ճանապարհը, ուշադրություն հրավիրել ճանապարհի ծայրաստիճան անբարվոք վիճակի վրա:

Ճանապարհի հիմնանորոգման խնդիրը, կարելի է ասել, Խոզնավարի, Վաղատուրի, Խանածախի բնակիչների մտահոգող առանցքային հարցերից է, ինչում վերստին համոզվեցինք՝ խոզնավարցիների մտահոգությունները լսելիս:

Եվ, այդուհանդերձ, Խոզնավարում (ինչպես եւ սահմանային ամեն մի բնակավայրում) հարցերի հարցը գյուղի անվտանգության ապահովումն է: Իսկ մայիսի 20-ին թուրք-ազերիների՝ գյուղի ուղղությամբ առաջխաղացման փաստը նորովի է կարեւորել անվտանգության խնդիրն ու ավելի տեսանելի դարձրել գյուղին սպառնացող վտանգները:

Անկարելի էր չտեսնել ու չհպարտանալ՝ գյուղի տղամարդիկ տրամադրված են վճռական՝ ոչ մի թիզ հող չի կարող զիջվել Ադրբեջանին, ոչ մի քայլ նահանջ չի կարող տեղի ունենալ: Եվ մարդիկ նորից էին իշխանություններից պահանջում՝ տվեք մեզ զենք եւ մենք կբազմապատկենք հայ-ադրբեջանական սահմանի այդ հատվածի պաշտպանվածությունը, որ հիմա իրականացնում են կանոնավոր բանակի ստորաբաժանումները:

Գյուղացիները պահանջում են նաեւ՝ համագյուղացի պայմանագրայինները, որ ծառայում են մարզի այլ վայրերում, թող վերադառնան Խոզնավար եւ զինվորական ծառայություն իրականացնեն հայրենի բնօրրանում:

Հանդիպման ընթացքում մարդիկ դժգո-

հույթուն հայտնեցին մեր մարտական դիրքերի տեղաբաշխվածության ներկա համակարգից: Ի դեպ, այդ հարցը գյուղաբնակները բարձրացնում են ամիսներ շարունակ, բայց բանակային N կորպուսի հրամանատարությունը նշանակություն չի տալիս տեղանքին հազար անգամ ավելի բաշատեղյակ տեղաբնակների կարծիքին եւ հորդորին:

Ըստ գյուղացիների՝ հայկական մարտական դիրքերի ոչ խելամիտ տեղաբաշխման հետեւանքով էր, որ մայիսի 20-ին թուրք-ազերի ասկարները հաջողեցին հերթական անգամ խախտել Հայաստանի Հանրապետության պետական սահմանը եւ արեւմտյան բարձունքներից (մեր դիրքերը շրջանցելով) մոտենալ գյուղին:

Պատշաճ չենք համարում մանրամասներ շարադրել այդ առիթով, բայց հարգելի գեներալ-մայոր Ժիրայր Պողոսյանը (մեղմ ասած) իր գործեակերպը փոխելու խնդիր ունի, եթե նույնիսկ նման պահանջ չի ներկայացնում բարձր հրամանատարությունը:

Մայիսի 21-ին, որքանով հասկացանք, երեխաներին գյուղից տարիանելը մարտավարական անհրաժեշտություն է եղել եւ ոչ խուճապի դրսևորում: Միեւնույն ժամանակ՝ գյուղի ամբողջ բնակչությունը, նաեւ կանայք, նույնիսկ տարեցները մնացել են գյուղում՝ Խոզնավարը պաշտպանելու վճռականությամբ:

Մի խոսքով՝ խոզնավարցիներն իրենց համախմբվածությամբ եւ հաստատակամությամբ գյուղը վերածել էին անառիկ ամրոցի:

Այդ հաստատակամության շնորհիվ է, որ գյուղում համեմատաբար հանգիստ իրավիճակ էր, եւ օրվա վերջին տեղեկություններ ստացանք տարիանված երեխաների՝ գյուղ վերադառնալու մասին:

* * *

Գորիս վերադարձանք հիմնական ճանապարհով, որ ձգվում է Խանածախից դեպի Գորիս-Ստեփանակերտ մայրուղի:

Վերադարձանք համեմատաբար հանգիստ հոգեվիճակով եւ ինչ-որ առումով՝ հպարտության զգացումով:

Խոզնավարցիների պահվածքը եւս մեկ փայլուն օրինակ է, թե ինչպիսի նվիրումով է հայ մարդը կապված սրբություն դարձած հայրենի եզերքին:

Այդպիսի ժողովուրդը՝ շատ թե քիչ ողջամիտ առաջնորդություն ունենալու դեպքում, չի պարտվում, չի նահանջում, ծնկաչոք չի ծնկում...

* * *

Երեկվա գերադրված անցուդարձից հետո Խոզնավարի մերձակա ասերում՝ Սեւ լճից արեւելք ընկած արտավայրերում, Ղազիգյոլի մերձակայքում մեր անասնապահների ուրբերն էին՝ անդորրությամբ պարուրված, որոնց շուրջ ոչխարների հոտերն էին ու կովերի նախիրները, ինչն այսօր յուրօրինակ անդորրակներ էր դարձրել մեր սարերը:

Իսկ Սյունյաց աշխարհի այդ կողմերը՝ տեղաբաշխված հայոց զորականների տարատեսակ ուժերով, ոչ մի նմանություն չունեին մայիսի 12-ից առաջ եղած իրավիճակի հետ:

Այդ բոլորով հանդերձ՝ հարաբերական անդորրը (որ գուցե եւ թվացյալ է) պարտավոր ենք ծառայեցնել մեր պետական սահմանների պաշտպանվածության ամրապնդմանը. այնքան շատ անելիք ունենք:

Չմոռանալք նաեւ, թշնամին մայիսի 12-ին խուժել է Սյունիք եւ դեռ այստեղ է...

Թշնամին այնքան նեւթ է, որ ամեն րոպե կարող է օգտվել մեր երկրում ստեղծված խառնակ իրավիճակից եւ նորից արշավել դեպի Սյունիք...

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ, 21.05.21

Եվրոպայի երկրների դեսպաններն այցելել են հայ-ադրբեջանական սահման

Սկիզբը՝ էջ 4

անցում են կատարել գիշերը: Մինչև մայիսի 12-ը Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ստորաբաժանումները գտնվել են պետական սահմանի մոտակայքում և իրականացրել պետական սահմանի պահպանությունը: Հակառակ կողմում Ադրբեջանի Հանրապետության զինծառայողներն են իրականացրել մարտական հերթապահություն: 2020 թվականին դեկտեմբեր ամսին Ադրբեջանի և Հայաստանի Հանրապետության զինվորականները պետական սահմանի ճշգրտման ընթացքում տեղադրել են դրոշներ երկու կողմից՝ Հայաստանի Հանրապետության տարածքում մենք ենք տեղադրել, Ադրբեջանական Հանրապետության տարածքում՝ Ադրբեջանի զինվորականները»,- ասաց Մինասյանը:

Նրա խոսքով՝ մայիսի 12-ին Ադրբեջանի բանակի ստորաբաժանումները հատել են պետական սահմանը և 3-3,5 կմ խորացել Հայաստանի Հանրապետության տարածք:

«Նշված խորքում հայտնաբերվել են 200-250 զինծառայողներ տարբեր զորատեսակներից՝ և սահմանապահ զորքերից, և Ադրբեջանական Հանրապետության հատուկ զորքերի ստորաբաժանումներից», – նշեց Մինասյանը:

Կորպուսի շտաբի պետ խոսքով՝ այս պահի դրությամբ իրադրությունը վերահսկվում է: «Մեր ստորաբաժանումները գտնվում են ելման դիրքերում, Ադրբեջանի զինված ուժերի ստորաբաժանների հետ անմիջական շփման պայմաններում: Մոտակայքում գտնվում են նաև բնակավայրեր, բնակավայրերում խուճապային իրավիճակ չկա, բոլորին հասկանալի է, որ իրադրությունը շտկման փուլում է»,- ասաց Մինասյանը:

Դեսպանները կորպուսի շտաբի պետին ուղղեցին իրենց հուզող հարցերը, մասնավորապես՝ արդյո՞ք Ադրբեջանի կողմից սահմանին կոտակումներ կան: Կորպուսի շտաբի պետը դրական պատասխանեց՝ նշելով, որ Ադրբեջանի կողմից սահմանին նկատվել են կոտակումներ: «Հետախուզական անօդաչու թռչող սարքեր նույնպես նկատվել են», – հավելեց նա:

Միջոցառման ավարտից հետո դեսպաններն ուղևորվեցին Սև լճի տարածք:

Հայ-ադրբեջանական սահմանին տիրող իրավիճակին ծանոթանալու նպատակով Սյունիքի մարզ են այցելել Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար Անդրեա Վիկտորին, ԵՄ ներկայացուցիչ Ժան Պլեյնզել, Միլիա Զիլին, Հայաստանում Հեռախոսի դեսպան Բեդրիս Կոպեցկին, Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Ժոնաթան Լաբուր, Հայաստանում Գերմանիայի դեսպան Միխայել Բանցհաֆը, Հայաստանում Իտալիայի դեսպան Ջիովաննի Դիոնիսի, Հայաստանում Լիտվայի դեսպան Ինգա Ստանիտե-Տոլդիկե-Նեն, Հայաստանում Լիդերլանդների դեսպան Լիլյուա Յակոբ Միտերսդը, Հայաստանում Լեհաստանի դեսպանի ժամանակավոր պաշտոնակար Քրիստոֆ Բարտզակը, Հայաստանում Ռումինիայի դեսպան Կորնել Իոնեսկուն, Հայաստանում Սլովակիայի դեսպան Միլոսլավ Զաչեկը, Հայաստանում Ըվերիայի դեսպան Պատրիկ Սվենսոնը, Հայաստանում Հունաստանի դեսպան Էվանգելոս Տոլունակիսը:

ARMENPRESS.AM

ԿՈՐԵԼ Է // ՀՀ ՊՆ մարշալ Արմենակ Խանիկյանից անվան Ռազմական ավիացիոն համալսարանի 2013թ. շրջանավարտ Դավիթ Կարենի Արզումանյանի դիմումը՝ սերիա AB 157872, գրանցման համար 731: Համարել անվավեր:

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱԺԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՐ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:

Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Երկրորդ ներկայացնել մեքենագիր վիճակում:
«ԳՐՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում

տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:
Նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1030, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 27.05.2021թ.: